Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

(ԱՆՑԱԾ ՄԵԿ ՏԱՐԻ ՅՈԹ ԱՄՍՎԱ ԿՏՐՎԱԾՔՈՎ)

Տեսչական մարմինը իրականացնում է ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների, չափագիտական կանոնների և նորմերի կատարման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի, ինչպես նաև հարգորոշման և հարգադրոշմման պայմանների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն՝ ապահովելով վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների կանխարգելումը, սպառողների իրավունքների և օրիանական շահերի պաշտպանությունը:

Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 249 ստուգում, որից 196-ը ծրագրով նախատեսված, 45-ը՝ ոլորտային (ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի ոլորտում), 7-ը՝ ՀՀ վարչապետի հանձնարարականով (ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի ոլորտում, չափագիտական կանոնների և նորմերի պահպանման վերաբերյալ), իսկ 1-ը՝ բողոքի հիման վրա:

Իրականացված ստուգումների արդյունքում 204 տնտեսավարող սուբյեկտների մոտ (82%) հայտնաբերվել են տարբեր բնույթի խախտումներ, այն է՝ համապատասխանության գնահատման փաստաթղթերի բացակայություն, մակնշման, չափագիտական նորմերի և այլ խախտումներ:

Ստուգումների ընթացքում, Տեսչական մարմնի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման նպատակով արձակվել է թվով 25 կարգադրագիր:

Ստուգման արդյունքներով նշանակված տուգանքների գումարը կազմել է 30 մլն. 720 հազար ՀՀ դրամ, որից պետական բյուջե արդեն իսկ վճարվել է 27 մլն. 200 հազար ՀՀ դրամ՝ գանձելության ցուցանիշը կազմելով 88,5%: Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Ստուգումների ընթացքում, Տեսչական մարմնի կողմից բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ արձակված կարգադրագրերի կատարման ապահովման համար տնտեսավարող սուբյեկտները դիմել և համապատասխան մարմիններից ստացել են՝

- թվով 122 համապատասխանության գնահատման փաստաթուղթ՝ սերտիֆիկատներ և հայտարարագրեր, այդ թվում՝ օծանելիքի, լվացող և մաքրող միջոցների, խաղալիքների, մանկական հիգենիկ պարագաների, թեթև արդյունաբերության և այլ ոլորտներում,
- թվով 295 չափման միջոց ենթարկվել է ստուգաչափման, այդ թվում՝ առողջապահությունում, բենզալցակայաններում, ԱԳԼՃԿ-ներում և այլ ոլորտներում կիրառվող չափման միջոցներ:

Տեսչական մարմնի <<Թեժ գիծ>> հեռախոսահամարով ստացվել է 257 հեռախոսազանգ: Ստացված հեռախոսազանգերից

- 62-ը վերաբերվել են Տեսչական մարմնի լիազորություններին, որոնց տրվել է սպառիչ պատասխան,
- 195 զանգ Տեսչական մարմնին վերապահված լիազորությունների շրջանակներից դուրս է եղել:

Կանխարգելման և իրազեկման աշխատանքների շրջանակում՝ ՀԿ-ների ներգրավմամբ, կազմակերպվել են հանդիպումներ Երևանում և հանրապետության 5 մարզերում՝ Շիրակ, Սյունիք, Կոտայք, Տավուշ և Լոռի: Դրանց շրջանակում ավելի քան 355 տնտեսվարողների ներկայացվել է ապրանքի կամ արտադրանքի շուկայահանմանը նախորդող ողջ գործընթացը՝ իրենց պարտավորությունների շրջանակը, ինչպես նաև տրվել է խորհրդատվություն տեխնիկական կանոնակարգերի կիրառման և Տեսչական մարմնի գործունեության վերաբերյալ:

ԶԼՄ-ներում տարբեր ձևաչափերով լուսաբանվել է Տեսչական մարմնի գործունեությունը՝ ըստ ստուգումների ծրագրի, ինչպես նաև օպերատիվ կերպով արձագանքվել է հանրության կողմից բարձրացված և լայն արձագանք ստացած խնդիրներին: ԶԼՄ-ների միջոցով իրականացվել է նաև խորհրդատվական աշխատանք՝ ուղղված սպառողների և տնտեսավարողների իրավագիտակցության բարձրացմանը:

Համագործակցություն է ձևավորվել սպառողների շահերի պաշտպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների հետ, մասնավորապես, ստեղծվել է Տեսչական մարմնի ղեկավարին կից խորհուրդ, որի կազմում ընդգրված է թվով 10 ՀԿ և արդեն իսկ կայացել է 6 նիստ:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից մշակվել և առաջարկություններ են ներկայացվել մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ: